Կազմված է 29.03.2023 թ.

Բաղկացած է 15 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

4-րդ հերթական համագումարի
05.11.2022թ. որոշմամբ

Արձանագրություն թիվ 05/11/2022

Կուսակցության Նախագահ՝ Տիգրան
Խզմալյան

29.03.2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
EUROPEAN PARTY OF ARMENIA
02817383

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 13.11.2019 թ.

Գրանցման համար՝ 211.172.1101596
ՀՎՀՀ՝ 02817383

13.11.2019 թ. գրանցված կանոնադրության
թիվ 00/2 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից

«02» օգոստոսի 2023թ.

Աշխատակից՝ Ե. Մկրտչյան

05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

ք. Երևան - 2023թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Եվրոպական կուսակցությունը (այսուհետ՝ Կուսակցություն) ՀՀ քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակն է հանրաքվեների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցության ցանկացած այլ ձևով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը:

1.2. Կուսակցությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ ողջ տարածքում՝ ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենքների ու միջազգային պայմանագրերի, ինչպես նաև սույն կանոնադրության ու իր ծրագրի շրջանակներում:

1.3 . Կուսակցության անվանումն է՝
ա) հայերեն լրիվ՝ Հայաստանի Եվրոպական կուսակցություն
հայերեն հապավում՝ ՀԵվԿ

1.4. Օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից Կուսակցությունը հանդիսանում է ոչ առևտրային իրավաբանական անձ և օգտվում է դրանից բխող իրավունքներից և կրում համապատասխան պարտականություններ:

1.5. Կուսակցությունն ունի իր անվանումով հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ:

1.6. Կուսակցության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Պարոնյան փ. 1, բն. 41:

1.7. Կուսակցության խորհրդանշանները հայերեն տարբերակով Հայաստանի Եվրոպական Կուսակցություն իսկ անգլերեն տարբերակով European Party of Armenia հապավումն է, որը վերածվել է Արարատ լեռան՝ եվրոպական աստղերով շրջապատված պատկերի (տես: Հավելված 1): Կուսակցության խորհրդանշանի հայերեն և անգլերեն տարբերակներն ունեն հավասար իրավաբանական ուժ:

2.ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Կուսակցության գործունեության նպատակն է մասնակցությունը հասարակական ու պետական կյանքին և իր ծրագրային ու կանոնադրական սկզբունքների իրականացումը:

2.2. Կուսակցությունն ունի իր նպատակին հասնելու քաղաքական ծրագիր, որից ելնելով մշակում և իրականացնում է իր գործունեությունը:
2.3. Կուսակցությունն առաջնային է համարում ՀՀ անդամակցումը Եվրոպական Միությանը և Հյուսիս-Ատլանտյան պաշտպանական դաշինքին: Այդ նպատակին Կուսակցությունը ձգտելու է հասնել ժողովրդավարական ընտրությունների միջոցով ՀՀ

պետական մարմիններում իր ներկայացուցչության ապահովմամբ և ՀՀ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը իր մասնակցությամբ:

2.4. Կուսակցությունը կարող է համագործակցել ՀՀ պետական և հասարակական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների, այլ կուսակցությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, ինչպես նաև առանց իրավաբանական անձ կազմավորելու ստեղծել դաշինքներ ու միավորումներ (այդ թվում՝ ընտրական) այլ կուսակցությունների հետ:

2.5. Կուսակցությունը կարող է այլ պետություններում հիմնել ներկայացուցչություններ՝ ՀՀ օրենսդրությամբ և այդ երկրների օրենսդրությամբ սահմանված կարգով, հաստատել կապեր արտասահմանյան կուսակցությունների և միավորումների հետ, անդամակցել միջազգային միություններին ու ասոցիացիաներին:

2.6. Կուսակցությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել զանգվածային լրատվության միջոցներ և հրատարակչություններ՝ տարածելու իր գաղափարախոսությունն ու տեսակետները:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կուսակցությանն անդամակցությունը կատարվում է կամավոր և անհատական հիմունքներով: Կուսակցության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ընտրական իրավունք ունեցող ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, ով ընդունում է Կուսակցության գաղափարախոսությունը, ծրագիրն ու Կանոնադրությունը, ծանոթ է դրանց դրույթներին և չի հանդիսանում որևէ այլ կուսակցության անդամ:

3.2. Կուսակցության անդամակցության որոշումը ընդունվում է քաղաքացու գրավոր դիմումի հիման վրա Վարչության կողմից՝ Կուսակցության տարածքային ստորաբաժանման եզրակացությունը հաշվի առնելով կամ առանց դրա: Կուսակցության անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի (որը պետք է ներկայացվի Կուսակցության քարտուղարին) կամ Վարչության՝ տվյալ անդամին Կուսակցությունից հեռացնելու վերաբերյալ որոշման հիման վրա, ինչպես նաև Կուսակցության լուծարման կամ Օրենքով նախատեսված այլ դեպքերում: Կուսակցության հիմնադիրները Կուսակցության պետական գրանցումից հետո օրենքի ուժով դառնում են Կուսակցության անդամներ:

3.3. Կուսակցության անդամը մուծում է անդամավճար, որի չափերը և գանձման կարգը հաստատվում է Վարչության կողմից: Անդամավճարի չափը առաջին անգամ կարող է որոշվել հիմնադիր համագումարում:

3.4. Կուսակցության անդամն իրավունք ունի՝

ա) Կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Կուսակցության գործունեությանը և Կուսակցության կողմից առաջադրվել տարբեր մակարդակի ընտրություններում,
բ) ընտրել և ընտրվել Կուսակցության ու նրա տարածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում
գ) ներկա լինել Կուսակցության համագումարների նիստերին,
դ) ծանոթանալ Կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,
ե) Կուսակցության ղեկավար մարմիններին ներկայացնել Կուսակցության գործունեության, Ծրագրի և Կանոնադրության վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, քննարկել և անհրաժեշտության դեպքում բողոքարկել Կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները,
զ) տեղեկատվություն ստանալ Կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կուսակցության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու կուսակցության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը,
է) իր դիմումի համաձայն կամովին դադարեցնել իր անդամակցությունը Կուսակցությանը:

3.5. Կուսակցության անդամը պարտավոր է՝
ա) ընդունել կուսակցության Ծրագիրն ու Կանոնադրությունը և իր գործունեությամբ նպաստել դրանցում ամրագրված դրույթների կենսագործմանը,
բ) մասնակցել Կուսակցության աշխատանքներին, կատարել կուսակցության ղեկավար մարմինների ընդունված որոշումները,
գ) Կուսակցության Վարչության կողմից սահմանած չափով մուծել անդամավճարը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1. Կուսակցության ղեկավար մարմիններն են՝ Կուսակցության Համագումարը, Վարչությունը, Վարչության Նախագահը, Կուսակցության վերասկողություն իրականացնող մարմինը՝ Վերահսկիչ Հանձնաժողովն է:
4.2. Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը Համագումարն է, մշտապես գործող ղեկավար մարմինը Վարչությունն է: Համագումարի որոշումները պարտադիր են Կուսակցության բոլոր անդամների համար: Համագումարը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Հերթական Համագումարը հրավիրվում է մշտապես գործող ղեկավար մարմնի (Վարչության) կողմից երեք տարին մեկ անգամ: Արտահերթ համագումարը հրավիրվում է Կուսակցության Վարչության կողմից՝ նրա (Վարչության) անդամների 2/3-ի նախաձեռնությամբ կամ Կուսակցության անդամների առնվազն 2/3-ի նախաձեռնությամբ

Համագումարին ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունի Կուսակցության յուրաքանչյուր անդամ, ով Համագումարի անցկացումից առնվազն 5 օր առաջ բանավոր (ներառյալ, առանց սահմանափակման, հեռախոսակապի, սոցիալական ցանցերի և էլեկտրոնային հաղորդակցման այլ միջոցներով) կամ գրավոր (ներառյալ, առանց սահմանափակման, բնակության հասցեով նամակ ուղարկելու, էլեկտրոնային փոստի, հեռախոսակապի, սոցիալական ցանցերի և էլեկտրոնային հաղորդակցման այլ միջոցներով) կարգով Վարչությանը տեղեկացնում է Համագումարին մասնակցելու իր ցանկության մասին:
Համագումարի անցկացման օրվա և վայրի մասին Կուսակցության անդամները ծանուցվում են Վարչության կողմից բանավոր (ներառյալ, առանց սահմանափակման, հեռախոսակապի, սոցիալական ցանցերի և էլեկտրոնային հաղորդակցման այլ միջոցներով) կամ գրավոր (ներառյալ, առանց սահմանափակման, բնակության հասցեով նամակ ուղարկելու, էլեկտրոնային փոստի, հեռախոսակապի, սոցիալական ցանցերի և էլեկտրոնային հաղորդակցման այլ միջոցներով) կարգով՝ Համագումարի կայացման օրվանից առնվազն 15 օր առաջ:
Կուսակցության համագումարն իրավազոր է, եթե համագումարին ներկա է կուսակցության անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, իսկ համագումարին պատվիրակների մասնակցության դեպքում՝ պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ: Համագումարը նախագահում է Վարչության նախագահը, իսկ նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից:

Եթե սույն կանոնադրությամբ կամ օրենքով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, ապա Համագումարի կողմից որոշումներն ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող ներկաների ձայների մեծամասնությամբ:
Կուսակցության կանոնադրությունում և ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրության, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրության, կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներն ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Կուսակցության Համագումարի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա) Կուսակցության Կանոնադրության հաստատումը և Ծրագրի ընդունումը, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարումը, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը, Կուսակցության կանոնադրության և/կամ Ծրագրի փոփոխությունները պետք է նիստի ժամանակ զեկուցվեն նիստին մասնակցող Կուսակցության անդամների և/կամ պատվիրակներին՝ նախքան քվեարկությունը,
բ) Կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը և կազմալուծումը,

գ) մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի՝ Վարչության նախագահի ընտրությունը և լիազորությունների դադարեցումը, որը ի պաշտոնե նաև հանդիսանում է Կուսակցության նախագահ,

դ) Կուսակցության քարտուղարի ընտրությունը,

ե) Կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշման ընդունումը,

զ) Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն առաջին երեք տասնյակի հաստատումը, իսկ դաշինքով ընտրություններին մասնակցելու դեպքում՝ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն երեք տասնյակի հաստատումը:

է) Կուսակցության Վարչության քաղաքական զեկույցի հաստատումը,

ը) Կուսակցության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը,

թ) Կուսակցության Վարչության կողմից առաջադրված՝ ՀՀ պետական և/կամ ընտրովի պաշտոնների թեկնածության հաստատումը,

ժ) Կուսակցության տարեկան բյուջեի հաստատումը:

4.3. Համագումարում Կուսակցության Նախագահի առաջարկով ընտրվում են Կուսակցության Քարտուղարը և Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի՝ Կուսակցության Վարչության անդամները 3 տարի ժամկետով: Կուսակցության Վարչությունը բաղկացած է 9 անդամներից, այդ թվում. Վարչության նախագահից, որը նաև Կուսակցության նախագահն է, Վարչության փոխնախագահից և Վարչության ևս 7 անդամից: Վարչության փոխնախագահի թեկնածությունը առաջադրում է վարչության նախագահը, փոխնախագահը ընտրվում է Համագումարի կողմից 3 տարի ժամկետով:

4.4. Կուսակցության Վարչությանը կից գործում է Կուսակցության Քարտուղարությունը, որը չի հանդիսանում Կուսակցության ղեկավար մարմին: Կուսակցության Քարտուղարությունը բաղկացած է Կուսակցության քարտուղարից և Կուսակցության մամլո խոսնակից: Քարտուղարության աշխատանքը և մամլո խոսնակի ընտրությունը կանոնակարգվում է Կուսակցության Վարչության կողմից: Անհրաժեշտության դեպքում Վարչության որոշմամբ Քարտուղարության աշխատակազմը լրացվում է համապատասխան տեխնիկական մասնագետներով: Քարտուղարությունը ապահովում է Կուսակցության բնականոն գործունեության համար անհրաժեշտ կազմակերպչական և այլ ընթացիկ աշխատանքները, ինչպես նաև ապահովում է Կուսակցության մարմինների և ստորաբաժանումների միջև համակարգումը:

4.5. Ի լրումն Կուսակցության հիմնադրման պահին ստեղծված տարածքային ստորաբաժանումների, Վարչության կողմից կարող են ստեղծվելայլ տարածքային ստորաբաժանումներ՝ այդ ստորաբաժանման մեջ ընդգրկվող տեղական անդամներից առնվազն հինգի դիմումով կամ համաձայնությամբ:

4.6. Կուսակցության անդամ(ների) ՀՀ ԱԺ ընտրության դեպքում ստեղծվում է Կուսակցության խորհրդարանական խմբակցություն, որը ենթարկվում է Կուսակցության Համագումարի և Կուսակցության վարչության որոշումներին:

4.7. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները ստեղծվում են տարածքային հատկանիշով՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքի վարչական շրջաններում:

4.8. Կուսակցության ստորաբաժանումները մշակում և Վարչության հաստատմանն են ներկայացնում իրենց գործունեության կանոնակարգերը:

4.9. Համագումարում ընտրվում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարը, այն է Վարչության նախագահը՝ 3 տարի ժամկետով: Վարչության նախագահը հանդիսանում է Կուսակցության նախագահը և իրականացնում է նրա լիազորությունները: Վարչության նախագահն ի պաշտոնե Կուսակցության անունից հանդես է գալիս այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում առանց լիազորագրի: Վարչության նախագահն իրավասու է Կուսակցության անունից գործարքներ կնքել: Ընդ որում, բացի կոմունալ ծառայություններից օգտվելու հետ կապված գործարքների, Կուսակցության համար ֆինանսական պարտավորություններ ստեղծող այլ գործարքները պետք է կնքվեն Վարչության համաձայնությամբ :

4.10. Կուսակցության Վարչությունը մշտապես գործող ղեկավար մարմին է, որը պատասխանատու է Կուսակցության գործունեության համար Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում: Վարչությունը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, որոնք նախագահում է Վարչության նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Վարչության փոխնախագահը կամ նիստին մասնակցող Վարչության անդամների կողմից որոշված անդամը: Նիստերը կարող են իրականացվել նաև հեռակա կարգով՝ հեռախոսային կամ տեսաձայնային կապի այլ միջոցներով: Վարչության նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում է Վարչության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են վարչության անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Վարչության նիստերը հրավիրվում են ամիսը մեկ անգամ, արտահերթ նիստ հրավիրվում է Կուսակցության նախագահի կողմից կամ Վարչության անդամների 1/3-ի նախաձեռնությամբ: Վարչության նիստն իրավազոր է, եթե դրա անցկացման օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել են Վարչության բոլոր անդամները: Վարչության անդամը պարտավոր է մասնակցել նիստերին: Վարչության անդամի լիազորությունները դադարելու դեպքում մինչև նոր անդամի ընտրությունը Վարչության նիստերը իրականացվում են և որոշումներն ընդունվում են տվյալ պահին Վարչության անդամի լիազորություններ ունեցողների ընդհանուր թվի հաշվառմամբ: Վարչության նիստերի արդյունքներով կազմվում է գրավոր արձանագրություն, որը ստորագրվում է Վարչության նախագահի և նիստն արձանագրող քարտուղարի կողմից:

4.11. Կուսակցության Վարչությունը

ա) նախապատրաստում և հրավիրում է հերթական և արտահերթ Համագումարներն ու նիստերը, կազմում է օրակարգը, որոշում է Համագումարի ու նիստերի անցկացման աշխատակարգը, տեղը, օրը և ժամը, իրականացնում է մասնակիցների ծանուցումը, տեղական ստորաբաժանումների պատվիրակների քանակը՝ ըստ սույն Կանոնադրությամբ սահմանված համամասնությունների,

բ) սահմանում է անդամավճարների չափերը և գանձման կարգը, սահմանում է անդամավճարներից առաջացող գումարների և ֆինանսական այլ միջոցների տնօրինման կարգը,

գ) որոշումներ է կայացնում ՀՀ ընտրովի մարմիններում և նշանակովի պաշտոններում Կուսակցության թեկնածությունների և նրանց գործունեության մասին,

դ) սահմանում է Կուսակցության աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը, գույքի և ֆինանսական միջոցների կառավարման կարգը, հավանություն է տալիս Կուսակցության համար ֆինանսական պարտավորություններ ստեղծող այլ գործարքների կնքմանը,

ե) Համագումարի կողմից հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է Կուսակցության ծախսերի նախահաշիվը,

զ) Կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ կամ տալիս է համաձայնություն Վարչության նախագահի կողմից այդպիսի գործարքների կնքմանը,

է) որոշումներ է ընդունում Կուսակցության տարածքային ստորաբաժանումներ ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց կանոնակարգերը,

ը) որոշումներ է ընդունում Կուսակցության անդամ ընդունելու և անդամին Կուսակցության շարքերից հեռացնելու վերաբերյալ,

թ) Համագումարին է ներկայացնում քաղաքական զեկույցը Կուսակցության անունից կնքված պայմանագրերի մասին, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունը,

ժ) Ձևավորում և հաստատում է Ազգային ժողովի ընտրություններին և համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցության համար Կուսակցության ընտրական ցուցակները Կուսակցության անդամների կազմից, հաշվի առնելով տարածքային ստորաբաժանումների և Կուսակցության անդամների առաջարկությունները: Ընտրական ցուցակները ձևավորվում են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջներին համապատասխան:

ժա) Ստեղծում է իր կազմում մասնագիտական հանձնաժողովներ, նշանակում է դրանց ղեկավարներին եւ հաշվետվություն է պահանջում կատարված աշխատանքի համար:

ժբ) փոփոխություններ է կատարում համագումարի կողմից Ազգային ժողովի ընտրությունների համար հաստատված ընտրական ցուցակներում, եթե համագումարի կողմից հաստատվելուց հետո կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առաջացել է կուսակցության կամքից անկախ պատճառներով.

ժգ) որոշում է կայացնում կուսակցության լուծարման մասին, եթե համագումարն իրավազոր չի եղել.

ժդ) հաստատում է Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով և կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև արտահերթ ընտրություններում՝ կուսակցության և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները:

4.12.Կուսակցության վերահսկողությունն իրականացնող մարմինը Վերահսկիչ հանձնաժողովն է, որը՝

ա) բաղկացած է երկու անդամներից, ընտրվում է Համագումարում երեք տարի ժամկետով և իրականացնում է Կուսակցության նյութական, ֆինանսական միջոցների ծախսման, ինչպես նաև մշտական գործող հանձնաժողովների նկատմամբ վերահսկողություն,

բ) Կուսակցությունում ցանկացած ժամանակ կարող է անցկացնել ստուգում, ծանոթանալ Կուսակցության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին,

գ) եզրակացություն է տալիս Կուսակցության հանձնաժողովների գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ և հաշվետվություն է ներկայացնում Համագումարին,

դ) համագումարների միջև ընկած ժամանակահատվածում եզրակացություն է կազմում մշտական գործող հանձնաժողովների գործունեության վերաբերյալ, կայացնում է որոշում և տեղեկացնում է վարչությանը

ե) չի կարող լինել Կուսակցության ղեկավար որևէ մարմնի անդամ,

զ) գործում է իր լիազորությունների շրջանակներում հաստատված կանոնակարգով, եթե այլ բան չի սահմանվել Համագումարի կողմից:

է) Վերահսկիչ հանձնաժողովի կամ դրա առանձին անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Համագումարի որոշմամբ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Վերահսկիչ հանձնաժողովը իրավազոր է որոշումներ ընդունել վերահսկիչ հանձնաժողովի նիստին իր բոլոր անդամների մասնակցությամբ՝ միաձայն:

4.13. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները.

ա) Կուսակցության տարածքային ստորաբաժանում է համարվում Կուսակցության առնվազն երեք անդամների տարածքային սկզբունքով ձևավորված և Վարչության կողմից համապատասխան կարգավիճակ ստացած միավորումը, որն ընդունում և կատարում է Կուսակցության կանոնադրության, ծրագրային և ընթացիկ որոշումների դրույթները,

բ) տարածքային ստորաբաժանումները ստեղծվում և լուծարվում են Կուսակցության Վարչության որոշմամբ,

գ) Կուսակցության տարածքային ստորաբաժանումների անդամների ընդհանուր ժողովները հրավիրվում են առնվազն տարեկան մեկ անգամ՝ անդամների համատեղ հավաքի ձևով և իրավազոր են, եթե դրանց մասնակցում են այդ մարմինների անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումները ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Որոշումների ընդունման ժամանակ ձայները հավասար բաշխվելու դեպքում Կուսակցության ստորաբաժանումների ղեկավարներն ունեն վճռորոշ ձայնի իրավունք, բացառությամբ երբ քննարկվում է տարածքային ստորաբաժանման ղեկավարի նշանակման կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը:

դ) տարածքային ստորաբաժանման նախագահն ընտրվում է Կուսակցության տարածքային ստորաբաժանման անդամների ընդհանուր ժողովի կողմից, ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, մեկ տարի ժամկետով՝ վերընտրվելու իրավունքով, և կարող է ցանկացած պահին ազատվել իր դիմումով (որը ներկայացվում է Վարչություն) կամ Կուսակցության տարածքային ստորաբաժանման անդամների ընդհանուր ժողովի կողմից՝ ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ,

ե) տարածքային ստորաբաժանման անդամների ընդհանուր ժողովը Վարչության կողմից սահմանված համամասնությամբ ընտրում է Կուսակցության Համագումարի պատվիրակներ,

զ) տարածքային ստորաբաժանման նախագահը ղեկավարում է ստորաբաժանման աշխատանքները, ապահովում է Կուսակցության որոշումների կատարումը, տիրապետում է տարածքային ստորաբաժանման գույքը և ֆինանսական միջոցները, օգտագործում է դրանք Կուսակցության և/կամ դրա համապատասխան տարածքային ստորաբաժանման կարիքների համար, ներկայացնում է Կուսակցության տարածքային կառույցը (ստորաբաժանումը) և հանդես է գալիս դրա անունից: Տարածքային ստորաբաժանման նախագահը իրավասու է կնքել ստորաբաժանման գրասենյակի մասով կոմունալ ծառայություններից օգտվելու գործարքներ:

է) տարածքային ստորաբաժանման նյութական և ֆինանսական միջոցների օգտագործման, ինչպես նաև գույքի տիրապետման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է տարածքային ստորաբաժանման վերահսկողը, որը ընտրվում է Վարչության առաջարկած թեկնածուների կողմից՝ տարածքային ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամկետով: Վերահսկողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում տարածքային ընդհանուր ժողովը ընտրում է նոր Վերահսկող: Վերահսկողն իրականացնում է ստուգումներ տարածքային ստորաբաժանմունքում, տալիս է եզրակացություններ բյուջեի

կատարողականի և այլ ֆինանսական միջոցների ու գույքի օգտագործման վերաբերյալ, կազմում է և տարածքային ստորաբաժանման ընդհանուր ժողովին է ներկայացնում է հաշվետվություններ:

ը) Կուսակցության տարածքային ստորաբաժանումների գործունեությունը դադարեցվում է Վարչության որոշմամբ, եթե դրա տեղական անդամների թիվը անընդմեջ երկու ամիս կամ ավելի պակաս է երեքից:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԳՈՒՅՔԸ, ԴՐԱՆՑ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Կուսակցությանը սեփականություն է հանդիսանում կուսակցական անդամավճարները, նրա անդամների՝ սեփականության իրավունքով Կուսակցությանը հանձնված անշարժ և շարժական գույքի, ոչ նյութական ակտիվները, ՀՀ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված կարգով կատարված նվիրատվությունները, պետական ֆինանսավորումը, սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելվող այլ աղբյուրներից ստացված եկամուտները: Կուսակցությանը սեփականության իրավունքով կարող է պատկանել անշարժ և շարժական գույք, ոչ նյութական ակտիվներ, դրամական միջոցներ և օրենքով չարգելված այլ գույք: Կուսակցությունը կարող է օրենքով սահմանված կարգով նաև ձեռք բերել գույքային իրավունքներ:

5.2. Կուսակցության գույքը և գույքային իրավունքները կարող են օգտագործվել դրա կանոնադրական նպատակներին հասնելու համար օրենքով չարգելված որևէ նպատակով:

5.3. Կուսակցության գույքը և գույքային իրավունքները տնօրինվում են Վարչության նախագահի կողմից, իսկ սույն Կանոնադրությամբ հատուկ նախատեսված դեպքերում՝ տարածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից: Ընդ որում, բացառությամբ կոմունալ ծառայություններից օգտվելու հետ կապված գործարքների, Կուսակցության համար ֆինանսական պարտավորություններ ստեղծող որևէ այլ գործարքներ պետք է կնքվի Վարչության համաձայնությամբ (հավանությամբ):

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Կուսակցությունը կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6.2. Կուսակցությունը իր պարտավորությունների համար պատասխանատու է իր գույքով:

6.3. Կուսակցությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների, իսկ նրա անդամները՝ Կուսակցության պարտավորությունների համար, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

6.4. Կուսակցությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով.
ա) հասարակության շրջանում ազատորեն տարածել իր գաղափարախոսությունը և տեղեկատվություն իր գործունեության մասին, քարոզել իր գաղափարներն ու նպատակները իր կողմից հիմնված կամ այլ զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ չազելված ձևերով,
բ) մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների նախապատրաստմանն ու անցկացմանը,
գ) օրենքով սահմանված կարգով ընտրական գործընթացում հավասար և ոչ խտրական պայմաններով օգտվելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած զանգվածային լրատվության միջոցներից,
դ) հիմնադրելու զանգվածային լրատվության միջոցներ և հրատարակչություններ,
ե) կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ,
զ) առանց իրավաբանական անձ կազմավորելու այլ կուսակցությունների հետ ստեղծելու դաշինքներ (միավորումներ),
է) հաստատելու և պահպանելու միջազգային կապեր այլ պետությունների կուսակցությունների և հասարակական միավորումների, միջազգային կազմակերպությունների հետ, դառնալու միջազգային միությունների անդամ,
ը) կնքել պայմանագրեր և գործարքներ, այդ թվում այլ երկրների ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային միություններին, գործուղել իր անդամներին այլ երկրներ և հրավիրել օտարերկրյա քաղաքացիներին,
թ) ներկայացնել և պաշտպանել իր ու իր անդամների իրավունքներն ու շահերը դատարանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,
ժ) իր կանոնադրական նպատակներին համապատասխան, տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները
ժա) իր գործունեության ֆինանսավորման, այդ թվում՝ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման նպատակով ստանալու վարկեր Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերից, վարկային կազմակերպություններից, ինչպես նաև ներդնել ավանդներ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում.
ժբ) իրականացնել օրենսդրությամբ չարգելված, իր նպատակներին համապատասխան այլ գործունեություն:

6.5. Կուսակցությունը պարտավոր է՝
ա) պահպանել Սահմանադրությունը և օրենքները,
բ) յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ

հաշվետվությունը: Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն:,
գ) վարել իր անդամների հաշվառումը:

6.6. Ընտրություններին մասնակցության դեպքում, ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ օրվա ընթացքում Կուսակցությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում կուսակցության (կուսակցությունների դաշինքները՝ դրանցում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Կուսակցության վերակազմակերպումը կամ լուծարումը կատարվում է Համագումարի որոշմամբ՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՀԻՄՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ. ԿԻՐԱՌՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

8.1 Կուսակցության Կանոնադրության խախտման, ծրագրային դրույթներից և սկզբունքներից շեղվելու դեպքում Կուսակցության Վարչությունը համապատասխան բողոքի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ կարող է քննել համապատասխան փաստը և որոշում կայացնի Կուսակցության անդամի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառելու վերաբերյալ: Նախքան որոշման կայացումը Վարչությունը պետք է հնարավորություն տա համապատասխան անդամին իր բացատրությունները ներկայացնել՝ Վարչության կողմից նշված ժամկետում Վարչության նիստին ներկա լինելու կամ մինչ նիստը դրանք գրավոր ներկայացնելու միջոցով: Վարչության նիստին ներկա գտնվելու, բացատրություններ և հիմնավորումներ ներկայացնելու իրավունք ունեն ինչպես բողոք ներկայացրած անձը/անդամը, այնպես էլ կարգապահական խախտում թույլ տված անդամը: Բացատրություններ չներկայացնելը խոչընդոտ չէ կարգապահական պատասխանատվության կիրառման համար:

8.2 Կարգապահական պատասխանատվության տեսակներն են՝

ա) Նախազգուշացում,
բ) Նկատողություն,

գ)Կուսակցությունից հեռացում (Կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների անդամների դեպքում՝ Վարչության կողմից առաջարկություն է ներկայացվում Համագումարին տվյալ անդամի լիազորությունները ղեկավար կամ վերահսկողություն իրականացնող մարմնում դադարեցնելու վերաբերյալ, որի հաստատման դեպքում Վարչությունը իրավասու է որոշում կայացնել տվյալ անդամին Կուսակցությունից հեռացնելու վերաբերյալ):

8.3. Կուսակցության անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Վարչության որոշումը կարող է բողոքարկվել հերթական Համագումարի ժամանակ:

9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

9.1 Համագումարի պատվիրակները ընտրվում են Կուսակցության տարածքային ստորաբաժանումների կողմից՝ Վարչության սահմանած կարգով և համամասնությամբ: Այդուհանդերձ, Վարչության անդամները Համագումարին մասնակցում են ի պաշտոնե:

9.2 Համագումարի պատվիրակների ընտրության ժամանակ տարածքային ստորաբաժանման յուրաքանչյուր ութ անդամի հաշվով ընտրվում է մեկ պատվիրակ: Եթե Տարածքային ստորաբաժանման ութից պակաս անդամների հաշվով ընտրվում է ևս մեկ պատվիրակ:

9.3 Պատվիրակ կարող է ընտրվել բացառապես Կուսակցության անդամը: Պատվիրակների ցուցակը հաստատում է և պատվիրակների հաշվառումը իրականացնում է Կուսակցության Վարչությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայերեն տարբերակ

Անգլերեն տարբերակ

Հավելված 6

35 (տասնհինգերորդ)

05